

## ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍ



Խմբագրութիւնս ստացած ըլլալոյ  
ՀԱՅԿԱԿԱՆ Ս. Ս. Ռ. ԳԻՏՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ նոր և առ  
արձենալոր մէկ հրատարակութիւնը,  
Ակադեմիկոս Ա. Շ. Մնացական-  
եանի

#### Հայկական Զարդարուես-ը

իր ընթեղողներուն կը ներկայացն  
գրին ներածական բաժնեն եւ այլ  
առնեկան էջերէ մասեր : Գիրքը կը  
բաղկանայ 650 մնջապի էջերէ,  
սուրած է սպիտակ բուդրի վրայ  
եւ երկսին, բազմարի գեղատիպ  
նկարներով : Բացառիկ արձեսօն  
ույն գիրքը ցարդ իր տեսակին մէջ  
կը մնայ եղական : Հայկական Զար-  
դարուեսը եւ մասնաւորաբար Ման-  
կարնելացներիւնը մեր առուեսին  
կարեւոր երեսներէն մէկն է :

Հայ ժողովուրդը աշխարհի հնագոյն  
ժողովուրդներից մէկն է, նա գարերի ըն-  
թացքում կերտել է նաև իր հարուստ ու  
նշանաւոր կուլտուրան, որի մէջ առանձին  
տեղ է զրաւում հայկական զարդարուեսուը :

Զարդարուեսուը հայ ժողովրդի ստեղ-  
ծած արուեստի ամենահին, բայց ամենա-  
կենսունակ բնագաւառներից մէկն է, որի  
մի ծայրը թաղուած է նախնազարեան ան-  
դասակարգ հասարակութեան ծոցում, իսկ  
միւսն, այսօր էլ ծաղկելով, ձգւում է զէ-

պի ապագան : Այն միաժամանակ արուեստի  
ամենամասսայական ձևերից մէկն է՝ ինչ-  
պէս իր ստեղծմամբ, տարածմամբ, զերով  
և նշանակութեամբ, այնպէս էլ իր ընդ-  
գրկած բնագաւառներով : Նրա բազմահա-  
զար ու բազմապիսի մատիվները, հնագոյն  
ժամանակներից սկսած, զարդարել են  
մարդկային մարմինը, հագուստը, բնակա-  
վայրերը, բնակարանները, անային կահ-  
կարասիքը, զործիքները, ձեռագրերն ու  
գրքերը, պատմական ու կրօնական զանա-

զան յուշարձանները, գերեզմանաքարերը, անասունները, մարմիններն ու ծածկոցները և այլն։ Նրա երփներանգ ձեւերը, իրենց աստվածանական զարգացմամբ, սրպէս յաղթահուկող աշխատանքի անջնջելի կնիքները իրենց զրաշմն են զրել հայ ժողովրդի նիւթական կուլտուրայի բոլոր բնագաւառների վրայ, ուր հասել են մեր նախնիների ստեղծագործ ձեռքերը։ Տարբեր զարաշրջաններում, տարբեր հանգամանքների մէջ, նրանք տարբեր իմաստ ու գեր են ստացել և իւրովիվ երարտագրել իրենց կերտողների ու տարածողների կեանքի պատմութիւնը, մասնաւոթիւնը՝ միշտ վերամշակելով, զարգանալով ու հարստանաւով։

Այսօր այդ վիթխարի կուլտուրան, իր ամբողջ հասակով մէկ, կանգնած է մաս- նագէտների առաջ՝ մի կողմից՝ որպէս պատ- մական սկզբնապրիոր, իսկ միւս կողմից որպէս անզուգական ժառանգութիւն՝ ըս- պատճենով իր արժանի վեր հանմանը, ու- սումնականութեանը և նպատակաուց օգ- տագործմանը:

Հասկանալի է, որ այդ հին ու հարուստ  
կուլտուրան պիտի վաղուց իր վրայ հրաւա-  
րած լիներ մասնագէտների ուշագրութիւնը  
եւ, յիրաւի, սկսած ժթ. դարի կէսերից,  
հրատարակում են առանձին ալբոններ  
ժողովածուներ, յօդուածներ, ուսումնա-  
սկրութիւններ՝ նույիրուած հայկական ար-  
ևեստի տարրեր բնագաւառներին, որոնց  
մէջ, յաճախ, չօշագուում են նաև հայկա-  
կան զարդարուեստի սրոշ հարցերը: Ակսուած  
աշխատանքները մի նոր թափ են ստանուած  
յատկապէս Հայաստանում սովետական կար-  
գեր հաստատուելուց յետոյ և մասնաւորա-  
պէս վերջին տասնամեկակների ընթացքում

Այստեղ հարկ ենք համարում յիշատակել ուսւ բազմավաստակ գիտնական Վ. Վ. Մատոսյին, Հայկական ձեռագրերի հմտամասնագէտ Գ. Գաթողիկոս Յովսէփեանին. Յա. Մասիք, Ա. Ի. Օրբելու, Թ. Թօրամանեանի, Գր. Ղափանցեանի, Գ. Լեւոնեանի, Բ. Բ. Պլոտոնովսկու, Լ. Ա. Խուրինովյանի, Ե. Մ. Տոկարսկու, Բ. Առաքելեանի Վ. Մ. Յարութիւնեանի, Կ. Ղափագարեանի, Ա. Ե. Սպիրինի, Ռ. Դրամբեանի և շատ ուրիշների անունները, որոնք մեծապէս նպաստել են Հայկական արուեստի տարրերը բնագաւառների գործամութիմների վեր հան-

Տան և ուսումնասիրութեան աշխատանքներին:

Ներկայ աշխատութեան բնոյթին համապատասխանող կարեսը էջերի ենք հանձնվագել յատկապէս Գր. Պատիանցեանի, Բ. Պիտարովսկու աշխատութիւններում (կենացծառ, տոտեմիզմ, աստուածութիւններ և այլն), «վիշտպ» կոչուող քարակոթողներին նույիրուած ուսումնասիրութիւններում (կենդանական եւ բուռական մօտիվներ, աստուածութիւններ), Բ. Առաքելեանի և Հայկական պատկերագանգակները Դ-է գարերում աշխատութեան մէջ (տոտեմիզմ, կոսմոգոնիզմ, հին պատկերացումներ և այլն) և ուրիշ գործերում:

Որքան էլ շատ են յիշուած ու չյիշուած անունները և նրանց կատարած աշխատանքները, բարձեալ, երբ այդ բոլորը դիտում ենք հայկական զարդարուեստի ամբողջ ժամանգութեան և նրա առջեն բարձրացող հարցերի ու աշխատանքի ընդհանուր ֆոնի վրայ, տեսնում ենք, որ դեռ ևս շատ քիչ զարծ է կատարուած։ Բաւական է յիշել, որ մինչեւ օրս գոյութիւն չունի աշքի ընկնող առանձին աշխատանքիւննուիրուած հայկական զարդարուեստին։ Աւստիւ եւ ընդհանրապէս հայկական արևեհատի մասին իրաւացցիորէն նկատուած է, որ այդ նշանաւոր ստեղծագործութիւններն ուսումնասիրուած են անբաւարար, նրանցից շատերը նոյնիսկ չեն հետազոտուած և մնում են արուեստագէտների ու շաղրացթեան դաշտից գուրսու։

Եւ եթէ մի կարպ կարիլի է բաւարար  
համարել նկարների ու նկարութիւնների  
միջոցով հայկական արևեստի սրոշ բնա-  
գաւառների զարդերի վեր հանման աշխա-  
տանքները, ապա նոյնը չի կարելի ասել  
ինչպէս որ և է բնագաւառի, այնպէս էլ  
առհասարակ ամրող զարդարուեստի ու-  
սումնասիրուրեան ընթացքի մասին։ Այդ  
ուղղութեամբ կատարուած աշխատանքնե-  
րը, հիմնականում, սահմանափակուել են  
որ և է բնագաւառի որ և է հատուածի զար-  
դամութիւնների նկարագրութեամբ և նրանց  
գովասանքով։ Շատ քիչ են այն փորձերը  
որոնք նպատակ ունենային թափանցել զար-  
դամութիւնների ներքին էութեան մէջ։ Ճիշդ  
է, տարբեր աշխատութիւններում հանդի-  
պում ենք մասնակի ջանքերի, որոշ, ճիշդ

գիտողութիւնների, մեկնաբանութիւնների ու հնթագրութիւնների, բայց և այնպէս նրանք միակողմանի են և յաճախ էլ զըստուրում են անընդունելի կարծիքներ։ Ուստի այսօր, նկատի առնելով այդ աշխատանքների ընդհանուր զիճակը, կարող ենք ասել, որ պատշաճորէն բարձրացուած և լուսաբանուած չեն հայկական զարդարուեստի ամենագլխաւոր, այն է՝ հայկական զարդարուեստի հիմնական մոտիվների ծագման եւ զաղափարական բավանդակութեան հարցերը։ Այսին, այդ հարցերը, իրենց ամբողջութեամբ, առաջազրուած անզամ չեն եղել, գոյութիւն չունի գէթ մի ամփափ ակնարկ՝ նուիրուած նրանց։

Պիտի նկատել, սակայն, որ համարեան ման զիճակ գոյութիւն ունի նաև ուրիշ ժաղափորդների մօտ։ Այս հանգամանքը շատ կարեօր է, որովհետեւ հայկական, ինչպէս և առհասարակ որևէ ժաղափրդի զարդարուեստի մոտիվների ուսումնասիրութեան բախտը պատմականորէն կապուած է նաև ուրիշ ժաղափորդների զարդարուեստի համապատասխան հարցերի ուսումնասիրութեան զիճակի հետ։ Մասնագէտները վազուց են նկատել, որ զարդարուեստի մոտիվներն ունեն քմիջազգային բնոյթ։ Հնայած նրանք իւրաքանչիւր ժաղափրդի մօտ մշակուած են հենց այդ ժաղափրդին յատուկ ոճով։ Այս երեւոյթի բացատրութեան փորձերը տեղի են տուել բազմաթիւ իրերամերժ կարծիքների, բայց, ինչպէս ուսու զիտոնական Վ. Ա. Նիկոլսկին է նշել, և Այդ նմանութեան հարցերը գենես զիտականորէն բոլորովին չեն մշակուած։

Այսպիսով, մի կողմից տուեալ ժողովրդի և առհասարակ բոլոր ժողովուրդների զարդարուեստների հիմնական մոտիվների և միւս կողմից՝ նրանց միջազգային բնոյթի հետ կապուած առեղծուածային զիճակը հիմք է հանգիստացել, որպէսզի ծնուեն ու ձեւակերպուեն մեծ թւոյն հակասական տեսակէտներ ու ենթագրութիւններ։

Զարդարուեստի մոտիվների հիմքում և նրանց էութեան մէջ ընկած են մարդկանց կրօնամիտափիկ պատկերացումները, սեռական բնազգը, վայրենի կըքերը, անհիմն ֆանտազիան, պատահական ձեւերը, ինքնանպատակ կրկնումները և այլն։

«Գաղափարների, պատկերացումների,

զիտակցութեան արտազրութիւնը», — առւմ են Մարքսն ու Էնդելսը, — սկզբնապէս անմիջականորէն միահւուուած է ուեալ կեանքի լեզուի — մարդկանց նիւթական գործունէութեան և նիւթական հազորդակեցութիւնների հետ։ Մարդկանց պատկերացումները, մտածողութիւնը, հոգեւոր հազորդակցութիւններն այսահեղ դեռեւս համարում են բիուած անմիջապէս մարդկայիննիւթական յարաբերութիւններից։ Նոյնը կարելի է ասել նաև հոգեւոր արտազրութեան մասին, ինչպէս [որ] այն զրսեալում է այս կամ այն ժողովրդի լեզուում, քաղաքականութեան, օքէնքների, բարոյականութեան, կրօնի, մետափիզիկայի մէջ և այլն։ Մարդկէ հանգիստանում են իրենց պատկերացումների, գաղափարների և այլ նմանների արտազրուղը . . . .

Այսպիսով, մորալը, կրօնը, մետաֆիզիկան և իգենովզիայի միւս տեսակներն ու նրանց համապատասխանող զիտակցութեան ձեւերը կորցնում են ինքնուրոյնութեան նկատելիութիւնը։ Երանք չունեն պատմութիւն, նրանք չունեն զարգացում, մարդկէ, որոնք զարգացնում են իրենց նիւթական արտազրութիւնը և իրենց նիւթական հազորդակցութիւնները, առեւելի իրադարձութիւնների հետ միասին փոշում են նաև իրենց մտածողութեան արդիւնքները։ Աչ թէ զիտակցութիւնն է որոշում կեցութիւնը։ այլ կեցութիւնն է որոշում զիտակցութիւնը։

Այս հանճարեղ զրոյթը բացում է մեր առաջ իգենովզիայի բայրու բնագաւառների, այդ թւում նաև զարդարուեստի մոտիվների ուսումնասիրութեան ճանապարհը։ Այն ցոյց է տալիս, որ այդ հարցերի լուծումը պիտի փնտառել սեալ կեանքում, մարդկային նիւթական փոխարաբերութիւնների ոլորտի մէջ, նիւթական, կոնկրետ նախադրեալում։

Իսկ, ինչպէս նշուած է մարքսիզմ-լինինիզմի կւասիկների գրոյթների հիման վրայ, և մարդկանց նիւթական կեանքի զըլխաւոր, որոշիչ պայմանը, այն պայմանը, որ որոշում է հասարակութեան ամրողչ կերպարանքը (այդ թւում նաև յարաբերութիւնները սեռերի միջև, ընտանիքի և ամուսնութեան ձեւերը), կենսամիջոցների հայթայթման եղանակն է, մարդկանց գո-

յութեան և նրանց սերնդի շարունակման համար անհրաժեշտ նիւթական բարիքների արտադրութեան եղանակը»:

Այստեղից պարզ է, որ մարդկանց մասն ողութեան և իդեոլոգիայի զլխաւոր առարկան պիտի լինէին հենց այդ նիւթական բարիքները և նրանց համար աշխատաւոր մարդկութեան թափած ձանր աշխատանքն ու անդուլ պայքարը:

Հասարակութեան հոգեւոր կեանքի ձեւաւորման աղբեւը, հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման աղբեւը պէտք է փըստել ոչ թէ հենց այդ իդեաների, թեռիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մէջ, այլ հասարակութեան նիւթական կեանքի պայմանների մէջ, հասարակական կեցութեան մէջ, որի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները և այնու։

Ներկայ աշխատութիւնը շարադրելու ամբողջ ընթացքում մենք աշխատել ենք միշտ նկատի ունենալ մարդքսիզմ-լինինիզմի կրասիկների այս ու համապատասխան բազմաթիւ ուրիշ ցուցումները և մասնաւորապէս Մարքսի կոնսպեկտը՝ գրուած լ. Հ. Մորգանի «Նախնագարեան հասարակութիւն» գրքի հիման վրայ ու հնդեւութիւնիքի, մասնաւոր սեփականութեան ու պետութեան ծագումը» աշխատութիւնը։

Սովետական մասնագէտները, զինուած մարքսիզմ-լինինիզմի մասնազօր ուսմունքով, այսօր լծուած են նաև առհասարակ զարգարուեաստագիտութեան հարցերի ուսումնասիրութեան պատուաւոր գործին Նրանք համասօրէն շարունակում են խորտակիչ քննադատութեան ենթարկել կղերաբուժութեան տեսաբանների կարծիքներն ու նրանց մեացուկները, մասնամեծ ջանքերն են գործադրում, որ առանձին ու չքեց հատորներով հրատարակեն Առկիտական Միութեան բոլոր եզրայրական ժողովուրդների զարդարուեաստանների տարրերը բընագաւառների հարաւոտ նիւթերը և ամէն կերպ մտածում են դիւրացնել նրանց ուսումնասիրութեան գործը։

Այսուհանդերձ առհասարակ զարգարուեստագիտութեան առջև կանգնած տեսական ամենագլխաւոր հարցերը, այն է՝ նրանց

հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակութեան հարցերը, մուռմ են չլուծուած։ Այդ ուղղութեամբ կատարուած որոշ փորձերը կրում են անսիստեմ բնոյթ, և երբեմն էլ զրաւորում անընդունելի հայացքներ, որոնք վերջին հաշուով վերեւում նշուած սիստեմաների մեացուկներն են։ Միծամբէս յարգելով սովետական մի շարք ականաւոր գիտականներին եւ բարձր գնահատելով նրանց ստեղծագործական մեծարժէք վաստակը, մենք չենք կարող մատնացոյց չանել նրանց գործերում առկա որոշ սիստեմներն ու թերութիւնները։ Այսպէս, օրինակ, Վ. Ա. Գորոգցովը, նկատի առնելով սուսական ասեղնագործութեան զարդարութիւնների մի խոչըր խումբ, գրանք զիտում է որպէս ժաղովրդական պրիմիտիվ, պարզունակ մտածողութեան հեշտ բացատրելի արգիւնք եւ համարում կրօնա-սիմվոլիկ նշանակութիւն ունեցող զարգեր։ Այդ զարգերի «կրօնա-սիմվոլիկ նշանակութիւնը ներկայ ժամանակներում հաստատորէն ուրոշուած է», — գրում է նա։ Գ. Ա. Մասլովան նայնպէս կրօնական մտածողութեան արգիւնք և համարում բոլոր ժողովուրդների զարդարուեաստի հիմնական մոտիվամբերը (բուսական մոտիվներ, կենդանական մոտիվներ, երկրաչափական մոտիվներ, երկնային մարմիններ) սկզբնապէս ունեցել են կախարդահայտական նշանակութիւն։ Ա. Ն. Ավելինինի համոզմամբ հայկական մանրանկարչութիւնը ձնուել ու զարգացել է, հիմնականում խայտարդէս փոխառութիւնների հօգի վրայ։ Ա. Ի. Ռուգենկոն սկիւթական որոշ կարեւոր զարդարութիւնների ծագումը կապում է ուրիշ ժողովուրդների հետ և այն։ Բատ որում, զրանք, ինչպէս ցոյց է տրում ներկայ աշխատութեան մէջ, սիստեմականներ են, որոնց հեղինակները գիտականորէն չեն հիմնաւորում իրենց կարծիքներն ու ենթադրութիւնները։ Ա. Շ. Մնելը Ակնենելու

(Եարունակելի՝ 1)